Ողջու՛յն, հարգելի՛ հարևան,

Անունս Զավիդան է: Ես ապրում եմ Կովկասի ամենամեծ քաղաքում՝ Բաքվում: Շատ զարմանալի է՝ ես նախկինում ևս հայեր տեսել եմ, որքան գիտեմ, այսօր անգամ Ադրբեջանում ավելի քան 20 հազար հայ
է ապրում մեծամասամբ՝ Բաքվում և Սումգայիթում: Նախկինում Թուրքիայում և արաբական երկրներում էլ եմ հայերի հանդիպել: Սակայն այսօր առաջին անգամ Հայաստանում ապրող մեկին, այսինքն՝ քեզ, նամակ եմ գրում:

Ինչպես գիտես, արդեն ավելի քան 30 տարի մեր միջև հակամարտությունը շարունակվում է: Պատերազմ սկսելը շատ հեշտ է, ավարտելը՝ շատ դժվար: Կցանկանայի մի հարց տալ քեզ. աշխարհում կա՞ ավելի սարսափելի բան, քան (զավակի կողմից) ծնողների կորուստն է: Կամ ի՞նչը կարող է լինել ավելի սարսափելի, քան բնակավայրի կարոտը, որտեղ ծնվել ես ու մեծացել: Հայտնի արաբ փիլիսոփա Իբն Հալուդինը մի հայտնի խոսք ունի. «Աշխարհագրությունը ազգերի ճակատագիրն է»: Մեր ժողովուրդները դարեր ի վեր ապրել են կողք կողքի: Հայտնի հայ բանաստեղծ Սայաթ– Նովան գրել է և՛ հայերեն, և՛ թուրքերեն:

Հարգելի՛ հարևան, կցանկանայի քեզ մի քանի հարց տալ: Ժամանակը չէ՞ արդյոք վերջ տալ այս հակամարտությանը, որը ծագել է մեր նախնիների միջև ու փոխանցվել մեզ: Արի՛ մի վայրկյան կողքից դիտենք, թե այս հակամարտությունից ով է շահում և ով՝ կորցնում: Վստահ եմ՝ դու էլ ինձ պես կտեսնես, որ այս հակամարտությունը երկու կողմերին էլ վնասում է: Ուրեմն, եթե այդպես է, ինչո՞ւ վերջ չտանք դրան ու չհաշտվենք: Իհարկե, մեր ազգերին հաշտեցնելը հեշտ չի լինելու, սակայն պետք է ինչ–որ տեղից սկսել, որպեսզի մեր երեխաներն անհայր ու անմայր չմեծանան, որպեսզի մեր երկրները չկողոպտվեն, որպեսզի խաղաղություն լինի:

Միթե՞ չպետք է փորձենք նախ սկսել միմյանց բարևել, ապա միմյանց տեսնելիս ժպտալ ու իրար տուն հաճախել և նախկինի պես կրկին ապրել համերաշխ:

Օրինակ՝ իմ տատիկը Հայաստանի Սյունիքի մարզի Սիսիան քաղաքից է, տատիկս Ադրբեջան է եկել 60 տարեկանում: Ընկերներիցս շատերի նախնիները Ղափանից, Սիսիանից, Մասիսից են եկել: Նրանք ամեն անգամ ինձ պատմում են Սևանի և թվարկածս մյուս բնակավայրերի գեղեցկության մասին: Ես, իհարկե, շատ եմ ուզում տեսնել իմ ընկերների պատմած վայրերը: Արտասահմանում գտնվելիս բազմիցս հանդիպել եմ Ադրբեջանում ապրած հայերի, ամեն անգամ նրանք հարցնում են Բաքվից կամ Գանձակից և հայտնում են, որ ուզում են վերադառնալ:

Նամակիս վերջում մաղթում եմ առանց պատերազմների, խաղաղ ու առաջադեմ աշխարհ:

Զավիդան